Ծուշանիկ Կուրղինյան

Եվ թող ես երթամ

Գիտեմ, ես կերթամ, մեծ հաղթանակի
Կծագե արեգ ազատ, հոգեթով . . .
Լուսավառ ցոլքը գիտակից կյանքի
Ճնշող խավարը կցրե շուտով:

Դուք՝ քա՜ջ ըմբոստներ, ձեռք ձեռքի տված,
Ստրուկ օրերի փշրած կապանքին՝
Անդարձ անդունդի խոր խորքում թաղած,
Արյունոտ անցյալին կերգեք ողորմի:

Դուք՝ նոր հույսերով ազատ ու անվախ,
Բուռն եռանդն արի սրտերիդ՝
Կդիմեք առաջ իդեալի անխախ<տ>
Նոր հիմք դնելու բողբոջ կյանքերիդ:

Եվ պարարտ հողի բեղմնավոր կրծքին
Կը փայլեն խաղաղ բահ, քլունգ, գութան
Եվ կուշտ գեղջուկի գոհ, զվարթագին
Ըմբոստ երգերն արձագանք կուտան:

Եվ շեն գյուղերից գոհունակ կյանքի
Կը հնչե աղմուկ, ուրախ աղաղակ,
Գորշագույն ծուխը ամեն տանիքի,

Լի օջախների կուտան օրինակ:

Եվ անտառների խորքից կուսական,
Հոյակապ ու լույս գործարաններից՝
Ժիր բանվորների բախտավորության
Կլսվի հիմնը հուժկու, բերկրալից:

Արթնացած միտքը կը ծնի հանճար,
Եվ ազատ խոսքը՝ վեհության ուղի .
Վաստակը՝ արդար, կյանքը՝ հավասար,
Մարդուն չի ընկճե քենը դառնաղի . . .

Հոգ չէ թե կերթամ, ազատած երկրի
Բեղմնավոր շերտը ուժ կտա մարմնիս .
Սուրբ ազատության վեհ ղողանջների
Շռինդն անսպառ կը զգվե հոգիս . . .

Ու նորից կապրեմ . . . հողի շերտերում,
Կերգեմ ձեզ հիմն կյանքի սրբազան .
Բողբոջ մտքերս բույսի արմատում
Կծորեմ անվերջ, որ տան կոկոններ . . .

Ու նորից կապրեմ տենչերս խեղդված
Արգավանդ հյութից կծաղկեն շուտով
Եվ շիրմիս վրա շքեղ բողբոջած՝
Ձեզ այցի կելնեն փարթամ փնջերով:

1907 թ. 27 հունվարի